ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17.12.2021 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Կ. Պ. Պողոսյան

Քարտուղար՝ Վ. Ա. Աղաբաբյան

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 24 անդամներից 20-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում: /Զեկ. Կ. Պողոսյան/
2. 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի քննարկում և հաստատում: /Զեկ. Կ. Պողոսյան/
3. 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի գործընթացի քննարկում՝ մուտքերի կատարողականով: /Զեկ. Կ. Պողոսյան/
4. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Մ. Ասիլյանը, Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ կիսամյակի կտրվածքով ստուգվել է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը: Զեկուցողը նշեց, որ մի քանի դասախոսներ ծրագիրը ոչ ամբողջական են իրականացրել /մեկ կամ երկու մուտք, պատճառը հիմնականում ոչ աշխատանքային օրերն են եղել/, և նախատեսվում է քննաշրջանին զուգահեռ

հնարավորինս շտկել բացթողումները: Որոշ դասախոսներ մատենավարական թերացումներ են ունեցել: Այդ բացերը քննարկման և շտկման փուլում են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ասիստենտ Է. Թեմրազյանը, Մ. Ասիլյանը, Ա. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների մուտքերի կատարման ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Անդրադառնալով 1-ին ընթացիկ հարցին՝ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ Հեռակա ուսուցման բաժնի «Պատմություն» մասնագիտության «Պատմություն» բակալավրի կրթական ծրագրի տեսական դասընթացը 2021թ.-ին ավարտած Կարեն Սարգսի Մխիթարյանին թույլատրվել է 2022թ. մասնակցել նույն մասնագիտության (բակալավարի կրթական ծրագրի) հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորմանը՝ ավարտական աշխատանքը վերահանձնելու համար: Ամբիոնում տեղի է ունեցել քննարկում /Արձ. թիվ 5, 11.12.2021/, և առաջարկվել է ավարտական աշխատանքի գիտական ղեկավար նշանակել պ.գ.թ., ասիստենտ Ա. Ազատյանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հաստատել «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի վերոհիշյալ առաջարկը:

ԼՍԵՑԻՆ.

Անդրադառնալով 2-րդ ընթացիկ հարցին՝ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ մասնաճյուղում այս տարի կազմակերպվելու է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»

մագիստրոսական կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորում: Ավարտական աշխատանքները արդեն պատրաստ են և հարկ է գրախոսներ նշանակել: Զեկուցողը նշեց, որ քննարկվել են աշխատանքները և նշանակվել գրախոսներ: Դեկանը առաջարկեց ըստ **Հավելված 1-ի** հաստատել մագիստրոսական ավարտական աշխատանքների գրախոսներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ, Թումանյանը, բ.գ.թ. Ք. Հարությունյանը:

Արտահայտվողները կարևորեցին մագիստրոսական աշխատանքների գրախոսման գործընթացը, բարձր գնահատեցին ՈՒՄՎ-ի կատարած կազմակերպչական աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ըստ հավելված 1-ի հաստատել ավարտական աշխատանքների գրախոսներին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2020-21 ՈՒՍՏԱՐՎԱ «ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՑԱՆԿՆ ԸՍՏ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԽՈՍՆԵՐԻ

N	Ուսանող	Թեմա	Ղեկավար	Գրախոս
1.	Աիդա Օթարյան	Աշխարհագրությունն արտասահմանյան դպրոցներում	Մ.գ.թ., ասիստենտ Հ. Ազիզյան	Ա.գ.թ., պրոֆեսոր Յու. Մուրադյան ՀՊՄՀ
2.	Իռա Ազիբեկյան	Աշխարհագրական նյութը դպրոցական ինտեգրված դասընթացներում	Մ.գ.թ., ասիստենտ Հ. Ազիզյան	Ա. Աջամօղլյան ՀՊՄՀ
3.	Մարիամ Մելիքսեթյան	Գործնական աշխատանքները դպրոցական աշխարհագրության ծրագրերում	Ասիստենտ Պ. Ասիլբեկյան	Ա.գ.թ., պրոֆեսոր Յու. Մուրադյան ՀՊՄՀ
4.	Օֆելյա Հարությունյան	Դպրոցական աշխարհագրության միջառարկայական կապերը	Ասիստենտ Պ. Ասիլբեկյան	Ա.գ.թ., դոցենտ Ս. Դայան ՀՊՄՀ
5.	Նարինե Համբարձումյան	Աշխարհագրության ուսուցչի առաջավոր փորձի ուսումնասիրությունը	Ա.գ.թ., պրոֆեսոր Գ. Հովհաննիսյան	Ա.գ.թ., դոցենտ Ս. Դայան ՀՊՄՀ
6.	Գայանե Սարգսյան	Սովորողների գիտելիքների ստուգումը աշխարհագրության դասաժամերին	Ա.գ.թ., պրոֆեսոր Գ. Հովհաննիսյան	Մ.գ.թ., դոցենտ Ա. Աջամօղլյան ՀՊՄՀ
7.	Արփինե Մարդանյան	Աշխարհագրական օլիմպիադաները որպես սովորողների կոմպետենցիաների գնահատման ձև	Ա.գ.թ., պրոֆեսոր Գ. Հովհաննիսյան	Ա.գ.դ., պրոֆեսոր Ա. Խոեցյան ՀՊՄՀ
8.	Նազիկ Թամրազյան	Ուսումնական նախագծերն աշխարհագրության դասավանդման	Ա.գ.թ., դոցենտ	Ա.գ.թ., պրոֆեսոր Յու. Մուրադյան ՀՊՄՀ

		պրոցեսում	Գ. Ալեքսանյան	
9.	Մերի Սարհատյան	Աշխարհագրական կրթության հայեցակարգերը և դպրոցական աշխարհագրության բովանդակության զարգացումը	Ա.գ.թ., դոցենտ Գ. Ալեքսանյան	Ա.գ.դ., պրոֆեսոր Ա. Խոեցյան ՀՊՄՀ
10.	Աննա Մանուչարյան	Ֆիզիկայի դպրոցական դասընթացի խնդիրների տեսակները, դասակարգումը և լուծման մեթոդները	Ֆ.մ.գ.թ., ասիստենտ Ա.Մարգարյան	Մ.գ.դ.,պրոֆեսոր Կ.Աթայան
11.	Հասմիկ Մատինյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունները դպրոցում ֆիզիկայի դասավանդման ժամանակ	Ֆ.մ.գ.թ., դոցենտ Աթոյան Մ.	Մ.գ.դ.,պրոֆեսոր Կ.Աթայան
12.	Ալվինա Փիրումյան	Մաթեմատիկական հասկացությունների ուսուցման մեթոդիկայի մասին	Մ.գ.դ., պրոֆեսոր Այվազյան Է.	Մ.գ.դ.,պրոֆեսոր Հ.Պետրոսյան
13.	Լիլիթ Հայրապետյան	Մաթեմատիկական ապացուցումների ուսուցման մեթոդիկան	Մ.գ.դ., պրոֆեսոր Այվազյան Է.	Մ.գ.դ.,պրոֆեսոր Հ.Պետրոսյան
14.	Մարգարիտա Աբազյան	Պատմական ժանրի գործառույթները կերպարվեստի դասերին	Մ.գ.թ., դոցենտ Ֆլջյան Լ.	Մ.գ.դ.,պրոֆեսոր Լ.Ներսիսյան
15.	Մարիամ Սարհատյան	Բնօրինակից նկարչությունը որպես կերպարվեստի ուսուցման ձև դպրոցում	Մ.գ.թ., դոցենտ Ֆլջյան Լ.	Մ.գ.դ.,պրոֆեսոր Լ.Ներսիսյան
16.	Կարինե Սարուխանյան	Նախադասության անդամների ուսուցումը	Բ.գ.թ.,դոցենտ Սարհատյան Ա.	Մ.գ.թ. Ա.Սարգսյան
17.	Հերմինե Մինասյան	Գոյականի հոլովման համակարգի ուսուցումը	Բ.գ.թ.,դոցենտ Սարհատյան Ա.	Մ.գ.թ. Ա.Սարգսյան
18.	Մելինե Բաղդասարյան	Բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը դպրոցում	Բ.գ.թ.,դոցենտ Թումանյան Լ.	Բ.գ.թ.,դոցենտ Ռ.Մարգարյան
19.	Դիանա Սայան	Ավ. Իսահակյանի ՝՝Աբու-Լալա Մահարի՝՝ պոեմի ուսուցման	Բ.գ.թ.,ասիստեն	Բ.գ.թ.,դոցենտ Վ.Եղիազարյան

		առանձնահատկությունները	տ Հասանյան Ա.	
20.	Իրինա Խալաթյան	Լսարանային աշխատանքները օտար լեզվի համագործակցային ուսուցման ժամանակ	Բ.գ.թ.,դոցենտ Հարությունյան Ք.	Բ.գ.դ.,պրոֆեսոր Գ.Մուրադյան
21.	Սաթիկ Բայրամյան	Օտար լեզվի հաղորդակցական դասավանդման սկզբունքները	Բ.գ.թ.,դոցենտ Հարությունյան Ք.	Բ.գ.թ.,պրոֆեսոր Ա.Չուբարյան
22.	Ալինա Եգանյան	Ռուսաց լեզվի գործնական քերականության ուսուցման մեթոդները դպրոցում	Բ.գ.թ.,դոցենտ Մարտիրյան Ն.	Բ.գ.թ.,ասիստենտ Կ.Հովհաննիսյան
23.	Շահանե Գասպարյան	Ինտերակտիվ մեթոդների կիրառումը ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործընթացում	Բ.գ.թ.,դոցենտ Մարտիրյան Ն.	Բ.գ.թ.,ասիստենտ Կ.Հովհաննիսյան